

## ԿՈՄԻՏԱՍ ՌԱՏԻՕԺԱՍ

### Հիմնուած 1935-ին Մօնթեվիտօ Ուրուկուայ

#### ՄԵՍՐՈՊԵԱՆ ՏԱՃԱՐ ՄԸ ՉԻ ՓԱԿՈՒԻՐ

Յարգելի Մելգոնեանցիներ,

Մեր զարմանքին հետ նաեւ շփոթած ենք:

Չարմացած ենք թէ ինչպէս Զ.Բ.Ը.Մ.ը որ իր հիմնադրութենէն մինչեւ օրս, իր բարեսիրական գլխաւոր նպատակներէն մին եղած է զարկ տալ դպրոցաշինութեան, որպէսզի Մաշտոցէն ճառագայթող շողերը ջերմացնեն մատաղ սերունդներու հոգիները, նման որոշումի մը կը յանգի, շփոթած ենք ի տես Զ.Բ.Ը.Մ.ի ղեկավարութեան սառնասրտութեան, Մելգոնեան Հաստատութեան նման կրթարանի հաշուոյն այսպիսի քայլի մը դիմելուն:

Ուրուկուայի այս հեռաւոր ափերէն Կոմիտաս Ռատիօժամը, Վռամեան Ակումբի պաշտօնական ձայնը, որ սփիւռքի առաջին հայկական ռատիօժամն է հիմնուած 1935-ին, անմասն չի մնար եւ իր զօրակցութիւնը կը յայտնէ ձեզի յարգելի շրջանաւարտներ, աշակերտներ, պատասխանատուներ:

Ձեր հրապարակած Բաց Նամակի սրտառուչ կոչին ընդառաջելով, Կոմիտաս Ռատիօժամի ալիքներէն յատուկ բաժին մը սկսած ենք ձայնասփռել շաբաթէ մը ի վեր. վստահ եղէք որ մեզի կ'ունկնկոյրեն ոչ միայն Ուրուկուայի եւ Արժանթինի մեր գաղութները, այլեւ աշխարհի մէջ սփռուած մեր հայրենակիցներէն շատեր, քանի որ Կոմիտաս Ռատիօժամը կը լսուի համացանցի միջոցաւ:

Ձեր պահանջը արդար է, ձեր առաքելութիւնը ազնիւ:

Կրթական եւ մշակութային հայ կեդրոններէն մին հանդիսացող Մելգոնեան Հաստատութիւնը ՈՉ ԿԸ ՓԱԿՈՒԻ ՈՉ ԱԼ ԿԸ ԾԱԽՈՒԻ, այդ երկու բայերը անյարիր են ձեր հաստատութեան ոչ միայն անուան այլ վիրաւորանք մը անոր ազգասէր զոյգ բարերարներու յիշատակին:

#### ՁԵՉ ՀԵՏ ԵՆՔ ՁԵՐ ԱՐԴԱՐ ՊԱՅՔԱՐԻՆ ՄԵՋ

Մօնթեվիտօ Կոմիտաս Ռատիօժամ  
Հայկական բաժնի պատասխանատու  
Կարօ Հեքիմեան

Սպաներէնի բաժնի  
պատասխանատու  
Արմենուհի Շէնէրճեան

